**Նոտարական ակտի կոդ:** 450-20170414-117-1162019
**Նոտարական ակտի գաղտնագիր:** EHAA1D

# *ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Հ*

## *Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին*

*ք. Երևան* *«12» ապրիլի, 2017թ.*

Երևան համայնքը, ի դեմս Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի, որի անունից 2017 թվականի ապրիլի 7-ի հ.1145-Ա որոշմամբ հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Մերյոժայի Ամյանը, այսուհետև`<<Կողմ-1>>, մի կողմից, և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը /հասցեն` կառավարության տուն հ.3/, այսուհետև` <<Կողմ-2>>, մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի 07.04.2017թ. հ.1145-Ա որոշումը`
Ն.Զարյան փողոցի հ.27 հասցեում գտնվող շենքի 2-րդ հարկի 28.0քմ /քսանութ/ մակերեսով տարածքի համար 2012 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության հ.6735 պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1 պայմանագրի 1-ին կետի 1.2 ենթակետում «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը» թվերը և բառերը փոխարինել «3/երեք/ տարի ժամկետով» թվով և բառերով:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և նոտարական կարգով վավերացումից հետո` ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում գրանցման պահից:

3. <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն` սույն համաձայնագրից ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ոչ ուշ` քան սույն համաձայնագրի նոտարական վավերացման օրվանից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն, 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակ տրվում է <<Կողմ-1>>-ին, երկու օրինակ` <<Կողմ-2>>-ին, և մեկ օրինակ պահվում է նոտարական գրասենյակում:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

| Կողմ-1 | Կողմ-2 |
|---|---|
| ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ | ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն |
| ի դեմս լիազորված անձ | |
| Արսեն Մերյոժայի Ամյանի | |
| Արգիշտիի փող. հ.1 | |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Ապրիլի տասնչորսին, երկու հազար տասնյոթ թվականին, սույն պայմանագիրը վավերացված է, իմ՝ Արաբկիր նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Դանիելյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած ֆիզիկական անձանց իրավունակությունը, նրանց գործունակությունը ստուգված են, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30/երեսուն/ օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 1814

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար:

Ս. Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

7-011-32-22-53

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
## ՈՐՈՇՈՒՄ

... Արգիշտի 1

1143-Ն

«07» ապրիլի 2017 թ.

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓՈՂՈՑԻ Հ.11, ԳԱՅԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.19 ԵՎ ԶԱՐՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.27 ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՆՔՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գրությունը՝ Դավիթ Անհաղթի փողոցի հ.11, Գայի պողոտայի հ.19 և Զարյան փողոցի հ.27 հասցեներում գտնվող վարչական շենքերից /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ/ հ.հ.06112012-01-1265, 28122012-01-1959, 06112012-01-1335 վարձակալության իրավունքով տրամադրված ոչ բնակելի տարածքների համար կնքված վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի դրույթներով, 466-րդ և 468-րդ հոդվածներով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշմամբ.

1. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ կնքել համաձայնագրեր Դավիթ Անհաղթի փողոցի հ.11, Գայի պողոտայի հ.19 և Զարյան փողոցի հ.27 հասցեներում գտնվող վարչական շենքերից համապատասխանաբար 16.5քմ, 30.4քմ և 28.0քմ մակերեսներով ոչ բնակելի տարածքների համար 2012 թվականին կնքված հ.հ.6745, 4871 և 6735 վարձակալության պայմանագրերի գործողության ժամկետները երկարացնելու մասին.

1) պայմանագրերի 1-ին կետերի 1.2-րդ ենթակետերում նշված «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը» թվերը և բառերը փոխարինել «3/երեք/ տարի ժամկետով» թվով և բառերով:

2. Ընդունել ի գիտություն, որ համաձայնագրերից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանումում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔ N 2-817
«10» 04 2017թ.

1847249

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «27» Ապրիլի 2017 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ի դեմս ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Արաբկիր Զարյան փողոց 27

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 26.10.2012- 6735, Երևանի քաղաքապետի 07.04.2017թ. թիվ 1145-Ա որոշում, Նոտարի 14.04.2017թ. թիվ 1814 համաձայնագիր

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

Վկայական N 27042017-01-0098, գաղտնաբառ՝ 1XRSUVLTRI3G

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | **01-003-0222-0037-001** | **Վարչական շենք** | **28 ք.մ.** | **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Անշարժ գույքը տրված է վարձակալության երեք տարի ժամկետով:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արմեն Հարությունյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ մասնագետ